Արձանագրություն N 2
ՀՀՔՊԿ-ԳՀԱՊՁԲ-18/10 ծածկագրով գրասենյակային ապրանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 25.04.2018թ.
ժամը 10:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Բաղինյան
Հանձնաժողովի անդամներ ՝ Տ. Ղուկասյան / գնահատող /
Շ. Իսախանյան /գնահատող/
Ս. Զաքոյան / բացող /
Գ. Խաչատրյան / բացող /
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Հարությունյան

1. Տեղեկություններ ՀՀՔՊԿ-ԳՀԱՊՁԲ-18/10 ծածկագրով գնման ընթացակարգին ներկայացված հայտերի բացման մասին

(Հ.Բաղինյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ

ա) Գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով 2018 թվականի ապրիլի 13-ին ժամը 11:30-ին:

բ) Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Էլ. փոստի հասցե	ՀՎՀՀ
1	<<Սմարթլայն>> ՍՊԸ	ssmartline@mail.ru	01548908
2	<<Արման Ասմանգուլյան>> ԱՁ	amana6@mail.ru	30923517
3	<<Ուլտրա Պրինտ>> ՍՊԸ	ultraprint@inbox.ru	00907818

գ) Մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

Մասնակցի անվանումը	Չափա-բաժինների համարները	Ապրանքի անվանումը	Նախահաշվային արժեքը	Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ**	Ընդհանուր գինը
1	2	3		4	5	6
<<Սմարթլայն>> ՍՊԸ	1	Օրագրեր և ամենօրյա նշումների տետրեր	21 000	31 666.67	6333.33	38 000
	2	Նոթատետրեր	37 500	20 625	4 125	24 750
<<Արման Ասմանգուլյան>> ԱՁ	1	Օրագրեր և ամենօրյա նշումների տետրեր	21 000	70 000	14 000	84 000
	2	Նոթատետրեր	37 500	37 500	7 500	90 000
<<Ուլտրա Պրինտ>> ՍՊԸ	1	Օրագրեր և ամենօրյա նշումների տետրեր	21 000	76 000	-	76 000
	2	Նոթատետրեր	37 500	75 000	-	75 000

դ) ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 22-րդ ենթակետի համաձայն՝ ներկայացված հայտերն ուսումնասիրելու նպատակով հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը հրավիրել հայտերի արդյունքների ամփոփմանը հաջորդող աշխատանքային օրը.

ե) 19.04.2018թ. ներկայացրած հայտերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է.

- <<Արման Ասմանգուլյան>> ԱՁ-ի կողմից ներկայացրած փաստաթղթերը ստորագրվել են դրա իրավասությունը չունեցող անձի կողմից (բացակայում է լիազորագիրը),
- 1-ին չափաբաժնի մասով բոլոր երեք մասնակիցների կողմից ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակներում համապատասխան չափաբաժնով գնվելիք ապրանքի նախահաշվային արժեքը:

զ) Հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջը՝ հանձնաժողովը որոշեց.
- կասեցնել նիստը,
- 1-ին չափաբաժնի մասով հրավիրել ոչ գնային պայմանները բավարարող գնահատված մասնակիցներին գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների՝ 2018 թվականի ապրիլի 23-ին ժամը 11:30-ին,
- ծանուցել <<Արման Ասմանգուլյան>> ԱՁ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել վերը նշված անհամապատասխանությունը:

է) 23.04.2018 թ. արձանագրված թերություններն ուղղելու վերաբերյալ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության և բանակցությունների անցկացման արդյունքում հանձնաժողովը որոշեց.
- <<Արման Ասմանգուլյան>> ԱՁ-ի կողմից մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվել է լիազորագիրը,
- <<Արման Ասմանգուլյան>> ԱՁ-ի հայտը երկրորդ չափաբաժնի մասով մերժել, քանի որ գնային առաջարկում առկա է թվաբանական անճշտություն,
- Բանակցություններին ներկայացել է միայն <<Սմարթլայն>> ՍՊԸ-ն, որի կողմից առաջին չափաբաժնի համար ներկայացվել է նոր գնային առաջարկ (օրագրեր և ամենօրյա նշումների տետրեր) 21 000 (քսանմեկ հազար) ՀՀ դրամ:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0:

2. Տեղեկություններ ՀՀՔՊԿ-ԳՀԱՊՁԲ-18/10 ծածկագրով գնման ընթացակարգի առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների մասին

(Հ.Բաղինյան)

2.1 Հիմք ընդունելով ընթացակարգի մասնակիցների կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը և բանակցությունների արդյունքները գնահատող հանձնաժողովի կողմից հայտերը գնահատվել են հետևյալ հերթականությամբ և հետևյալ կերպ.

Չափաբաժիններ 1		
Մրցույթում զբաղեցրած տեղը	***Մասնակցի անվանումը***	***Հայտի գնահատականը***
1	<<Սմարթլայն>> ՍՊԸ	բավարար
2	<<Արման Ասմանգուլյան>> ԱՁ	բավարար
3	<<Ուլտրա Պրինտ>> ՍՊԸ	բավարար
Չափաբաժին 2		
Մրցույթում զբաղեցրած տեղը	***Մասնակցի անվանումը***	***Հայտի գնահատականը***
1	<<Սմարթլայն>> ՍՊԸ	բավարար
2	<<Ուլտրա Պրինտ>> ՍՊԸ	բավարար
-	<<Արման Ասմանգուլյան>> ԱՁ	անբավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին ծանուցելու մասին

(Հ.Բաղինյան)

3.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերը՝ հանձնաժողովը որոշեց.

- Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած <<Սմարթլայն>> ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:
- Ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած <<Սմարթլայն>> ՍՊԸ-ին ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը՝ համաձայն հրավերով պահանջվող փաստաթղթերի: Սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ –5, դեմ - 0:

4. ՀՀՔՊԿ-ԳՀԱՊՁԲ-18/10 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Հ.Բաղինյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի և 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից պատասխանները ստանալու օրը, բայց ոչ ուշ, քան 2018 թվականի մայիսի 3-ը ժամը 11:30-ին ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Հ. Բաղինյան

Անդամ՝ ---------- Տ. Ղուկասյան

---------- Շ. Իսախանյան

---------- Ս. Զաքոյան

---------- Գ.Խաչատրյան

Արձանագրությունը կազմեց

հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Ն. Հարությունյան